ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թ. հունիսի 14-18-ը Բելգիայի Թագավորություն (Բրյուսել) գործուղման արդյունքների մասին

1. **Գործուղվողը (անունը, ազգանունը)՝**

Սերգեյ Ավետիսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության (այսուհետ՝ ՀՀ ԿԱ ՔԱԳՎ) պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Բելգիայի Թագավորություն (Բրյուսել), 2017 թ. հունիսի 14-18-ը

Հրավիրող կողմը՝

- Եվրոպայի աերոնավիգացիոն անվտանգության կազմակերպություն (ԵՎՐՈԿՈՆՏՐՈԼ)
- Եվրոպական Հանձնաժողով

4. **Գործուղման նպատակը՝**

- Մասնակցություն ԵՎՐՈԿՈՆՏՐՈԼ կազմակերպության հատուկ խորհրդի նիստին, որը նվիրված էր կազմակերպության գլխավոր տնօրենի ընտրություններին:
- Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև ընդհանուր ավիացիոն գոտու մասին համաձայնագրի շուրջ տեխնիկական քննարկում:

5. **Քննարկված թեմաները, հանդիպումները, ելույթները կամ քննարկված հարցերը՝**

Հայկական պատվիրակությունը, որը ղեկավարում էր ՀՀ ԿԱ ՔԱԳՎ պետ Սերգեյ Ավետիսյանը և որի կազմում էին Եվրոպական Միությունում Հայաստանի

Հանրապետության առևտրական ներկայացուցիչ Վարոս Սիմոնյանը, «Հայաերոնավիգացիա» ՓԲԸ գլխավոր տնօրեն Արթուր Գասպարյանը, ՀՀ ԿԱ ՔԱԳՎ աշխատակազմի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետ Աննա Զոբանյանը և ՀՀ ԿԱ ՔԱԳՎ աշխատակազմի օդանավակայանների սերտիֆիկացման և օդային երթևեկության կազմակերպման վարչության պետ Գալուստ Պողոսյանը, մասնակցել է ԵՎՐՈԿՈՆՏՐՈԼ կազմակերպության հատուկ խորհրդի նիստին և կազմակերպության գլխավոր տնօրենի ընտրություններին և անց է կացրել տեխնիկական քննարկում Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև ընդհանուր ավիացիոն գոտու մասին համաձայնագրի շուրջ Եվրոպական Հանձնաժողովի ներկայացուցիչներ՝ ԵՀ Շարժունակության և տրանսպորտի հարցերով գլխավոր տնօրինության ավիացիոն համաձայնագրերի բաժնի պետ Կլաուս Գեիլի և նույն բաժնի քաղաքականության գծով մասնագետ Էվա Զաջդելի հետ:

- ԵՎՐՈԿՈՆՏՐՈԼ կազմակերպության հատուկ խորհրդի նիստին մասնակցում էին ԵՎՐՈԿՈՆՏՐՈԼ կազմակերպության 41 անդամ-պետությունների ավիացիոն իշխանությունների ղեկավարներ և լիազորված այլ ներկայացուցիչներ: Կազմակերպության գլխավոր տնօրենի ընտրությանն առաջադրված էին 5 թեկնածուներ, որոնց ընտրությունները կայացել է 5 փուլով: Բոլոր թեկնածուներն ունեցել են ելույթներ՝ ներկայացնելով կազմակերպության ղեկավար ընտրվելու դեպքում իրականացվելիք ծրագրերը և կազմակերպության զարգացման տեսլականը: Ելույթներից հետո թեկնածուները պատասխանել են նիստի մասնակիցների բոլոր հարցերին: Խորհրդի անդամների թեկնածուների ցուցակը նախապես ուղարկվել էր ՀՀ արտաքին գործերի նախարարություն և ընտրությունների ընթացքում հաշվի է առնվել վերջինիս առաջարկությունները՝ կապված 5 պետության առաջադրած թեկնածուների հետ:
- Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև ընդհանուր ավիացիոն գոտու մասին համաձայնագրի շուրջ տեղի ունեցած քննարկման շրջանակում ԵՄ գործընկերների հետ մանրամասն վերլուծվել են ՀՀ-ում տեղի ունեցած պաշտոնական բանակցությունների արդյունքում ձևավորված բանակցման ենթակա

հոդվածները: Տեղի է ունեցել բազմակողմանի քննարկում, որի արդյունքում համաձայնագրի տեքստը լրամշակվել է:

6. **Պայմանավորվածությունները և առաջարկությունները՝**

- ԵՎՐՈԿՈՆՏՐՈԼ կազմակերպության գլխավոր տնօրենի ընտրությանն առաջադրված 5 թեկնածուներից գլխավոր տնօրեն ընտրվեց Իռլանդիայի ավիացիոն իշխանության ղեկավար Էամոնն Բռեննանը: Նորընտիր գլխավոր տնօրենը պաշտոնավարելու է 5 տարի ժամկետով՝ սկսած 2018 թ. հունվարի 1-ից:
- Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև ընդհանուր ավիացիոն գոտու մասին համաձայնագրի շուրջ տեղի ունեցած տեխնիկական քննարկման արդյունքում որոշվեց, որ համաձայնագրի լրամշակված տեքստը առաջիկայում Եվրոպական Հանձնաժողովի կողմից կներկայացվի ԵՄ անդամ-պետությունների քննարկմանը:

7. **Գործուղվողի ստորագրությունը, ամսաթիվը**

ՍԵՐԳԵՅ ԱՎԵՏԻՍՅԱՆ

20-ը հունիսի, 2017թ.